


«ՄԱՇՏՈՑԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ»

Պարույր Սևակի «Եվ այդ մի՝ Մաշտոց անունը» պոեմը տպագրվել է առաջին անգամ «Սովետական գրականություն» հանդեսի մայիսյան համարում: Մաշտոցյան համդիսությունների տպավորության տակ, 1962-ին գրվել է նաև «Թրի դեմ գրիչ» հոդվածը, որին որպես ենթախորագիր Պ.Սևակը կցել է «Մաշտոցի սխրագործությունը»: Հոդվածում հեղինակը մեկ անգամ նա հաստատում է, որ Մաշտոցը «մեր իսկ գոյության, մեր իսկության պարկերացումն է», մեր հիշողությունը մեր մասին. «Եվ սա չափազանցություն չէ, այլ պարզ եզրահանգում 16-դարյան մեր կյանքի, հեղությունը մեր ոլորապարույր պատմության՝ Մաշտոցից մինչև այսօր» (հ. 5, էջ 165):

Գերմանացի արևելագետ Մարկվարտը «մրջի հսկաներ» է անվանել Մաշտոցին և Սահակ Պարթևին: Իսկ ո՞վ է Մաշտոցն ըստ Պ.Սևակի. հայ գրերի ստեղծողը և Աստվածաշնչի թարգմանիչը: Սակայն միայն այդ չէ մեծ Գյուլարարի դերը, միայն այդքանով չի սպառնում նրա պատմական առաքելությունը: Մետոպ Մաշտոցը նախ և առաջ վիթխարի քաղաքագետ է, շարունակում է Սևակը, «որի շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմարվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից և ոչ մեկը» (հ. 5, էջ 166): Իր պնդումը հաստատելու նպատակով նա Մաշտոցի մահից 10-11 տարի հետո տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտը և Քաղկեդոնի ժողովը, որտեղ հայերը մերժեցին Հռոմի ծուռ խաչը և կոչեցին իրենց հայ քրիստոնյա, կապում է, Մաշտոցի հետ: Կապում է, որովհետև իր գյուղով նա հայերին հզոր ուժ տվեց՝ չընդունելու զրադաշտը՝ Ավարայրի ճակատամարտով, մերժելու Հռոմին՝ Քաղկեդոնով: Ուրեմն համաձայն

1. Մեքքերումներն ըստ Պ.Սևակի երկերի ժողովածուի վեց հատորյակի՝ 1972-1976թթ.:



Պ.Սևակի տրամաբանության՝ Մաշտոցը ոչ միայն սերտորեն կապվում է Ավարայրի ու Քաղկեդոնի «արյունոտ ու անարյուն» ճակատամարտերին, այլև «փաստական կազմակերպիչն է և մեկի, և մյուսի» (հ. 5, էջ 170): Ու եթե ավելացնենք նաև, որ Ավարայրի ոգին Վարդան Մամիկոնյանն էր, իսկ նա Մաշտոցի առաջին աշակերտներից մեկն էր, եզնիկ Կողբացու և շապերի հետ միասին, ուրեմն մեծ Գյուլարարը, հիրավի, Ավարայր էր կազմակերպել: Դա էլ հենց նրա՝ վիթխարի քաղաքագետ լինելու պայմանն էր:

«Թրի դեմ գրիչ» հողվածը գրվել է «եվ այր մի՝ մաշտոց անուն» պոեմից հետո: Եվ հեղինակը գիտական համոզմունքով, նաև իր պոեմից առաւր քաղվածքներով, փաստորեն հաստատում է այն, ինչ գեղարվեստական միջոցներով արել էր պոեմում, իհարկե հողվածում ավելի ընդարձակ ու տրամաբանական բացատրություններով, երբեմն էլ անգամ չափածոյի միտքը կրկնելով:

Մենք կայինք նաև նրանից առաջ,

Եվ դարեր առաջ:

Մենք բռնությունից խույս էինք տալիս՝

Բեղուն դաշտերին գերադասելով լեռները քարոտ,

Իսկ մեզ ուրնակոխ հեղապնդողին դիտապաստ անում

Եվ դրանով իսկ անուն ստանում՝

Կոչելով մեզ Հայկ:

(Հ. 4, էջ 243)

Այսպես է «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմի մուտքը, որին հետևում են հեղինակի նախասիրած «միտքը բացելու» հնարանքով «լրացույցի» մանրամասները. մենք անշունչ քարերին կենդանություն էինք տալիս, լեռների միջով ջուր հասցնում մեր այգիներին, ամուլ կավից կարասներ պատրաստում, մեջը գարեջուր լցնում ու զարմանք պատճառում գոռոզ նվաճողներին: Ապա Սևակը հինգ հավրածներում թվում է Մաշտոցից առաջ հայի շինարար ձեռքի ու ստեղծագործ մրքի արդյունքը և պոեմի առաջին մասն ավարտում նույն փիլիսոփայության հաստատմամբ:

Մենք կայինք նաև նրանից առաջ:

Մենք աստղեր էինք մեր աչքով զննում,

Արվալույս էինք թելերով հինում,
Տաճարից ելնում ու թարրոն գնում,
Վայելում նաև հաճույքը վսեմ
Մեր այն պարուհի-կաքավողների,
Որոնց մարմինը նվազ էր լռած
Եվ որոնք նաև «երգեին ձեռամբ»...

(Հ. 4, էջ 245)

Նույն գաղափարը բանաստեղծը զարգացնում է նաև նշված հոդվածի մուրաբային մասում. «Ճիշտ է, որ Մաշտոցից դարեր առաջ էլ հայերը կային: Ճիշտ է, որ նրանք ունեին պեղարկանություն և բանարվեստ, գիտեին կոթողներ կառուցել ու կերպել բազիմներ, քանում էին գինի և ձուլում արձաններ, թարրոն էին հաճախում ու վայելում գեղեցիկ հաճույքն այն պարուհի – կաքավողների, որոնք «երգեին ձեռամբ» (հ. 5, էջ 164): Այդպես էլ մի քանի այլ հավաթներում պոեմի և հոդվածի նմանությունները վկայում են, որ երկուսն էլ գրվել են մեկ գաղափարի առաջնության գիտակցությամբ՝ Մաշտոցի անկշռելի դերը հայության պահպանման, նրա՝ որպես քաղաքական ու մշակութային մեծագույն գործչի առաքելությունը արժևորելու նախանձախնդրությամբ: Մաշտոցը եկավ, որ մի բախտորոշ ժամանակահատվածում, պարմական ու քաղաքական բարդ պայմաններում, երբ իշխանավորները և եկեղեցու հոգևոր այրերն անկարող էին ազգային ճակատագրի լուծումը տալ, ինքը գտներ պատասխանը: «Հեթանոսական խավարում, ազգային անկախության վերջնական կորստի մթության մեջ, վաղվա և ապագայի անորոշության ու անհայտության մռայլ կես գիշերին նա մրմնջաց. «Եղիցի լույս»:

«Եւ եղև լույս»:

Գտնվել էր տանջալից հարցի պատասխանը, որ շատ պարզ էր, որովհետև միակն էր» (հ. 5, էջ 175):

Մաշտոցը գիտեր, որ ժողովուրդներն ապրում են ոչ միայն իրենց հողով, այլև լեզվով, իսկ հաճախ «ավելի իրենց լեզվով, քան նույնիսկ հողով», տեսնում էր, որ անհնար էր ուժով պահել հայրենի երկիրը, նա դիմեց միակ գեներին՝ լեզվի պահպանմանը ու արարեց իր գյուտը: Եվ

Պ.Սևակը համոզմունքով պնդում է, որ Մեսրոպ Մաշտոցն այսօր էլ մնում է «մեր մեծագույն և անբաղդատելի քաղաքագետը»:

Պոեմի 8-րդ գլխում Սևակը՝ առաջադրելով մեծ Գյուլարարի ծննդաբանության հարցը՝ «Որտեղի՞ց եկավ, Ի՞նչ ակից բխեց, եվ ինչպե՞ս եկավ, Հոսեց ի՞նչ հունով», միաժամանակ փալիս է մի պատասխան, որը երևույթի օրինաչափությունը մեկնում է ուրույն փիլիսոփայությամբ.

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի

Եվ հեղո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում,

Բայց նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,

Որ անչափ շատ են սպասել նրանց:

(Հ. 4, էջ 255)

Արդեն երկրորդ գլխից մինչ յոթերորդը ներառյալ՝ բանաստեղծը գեղեցիկ ու համոզիչ պատկերներով, պատմական ժամանակի ահեղ փորձությունների համապատկերում, ցույց էր տվել Մաշտոցի ծննդյան անհրաժեշտությունը, նրա համազգային առաքելության կարիքը, բնականաբար նաև «անչափ շատ սպասումի» պատճառը: Հեթանոսությունից քրիստոնեության անցման արյունոտ պայքարը, հին աստվածների կործանումն ու նոր հավատի հաստատման դժվարությունները Սևակը ներկայացրել է սուր հակասությունների, միմյանց բացասման պատկերներով:

Ճշտախոս էին աստվածները հին,

Ճշտախոս էին՝

Երեխայի պես.

Մարդկանց մարդ էին նրանք անվանում,

Իսկ իրենց՝ աստված:

Իսկ երբայցին ասաց. «Մարդ եմ ես»,

Եվ... դառավ աստված՝

«Մարդ եմ» ասելով...

(Հ. 4, էջ 246)

Եվ Արամազդներին, Միհրներին, Վահագներին փոխարինելու եկավ մի հրեա «սևնորուք-սևբեղ», ու Աստղիկների, Անահիտների ու Նանեների

փոխարեն բերեց «դալուկ» իր մորը, իսկ մեծիկների ու բազմիկների տեղում
«հասակ նեղեցին» դեռևս անծեփ ու փայտակտուր աղոթալուծից.

Իրենց խաչերը սուր մխրձելով

Նախ՝ սրտերի մեջ,

Ապա՝ երկրների...

(Հ. 4, էջ 247)

Համընդհանուր այս տակնուվրայությունը, հին ու նոր հավատների
արյունոտ պայքարն ընդգծելով, բանաստեղծը գեղարվեստական-
պատկերային փայլուն միջոցներով վերակենդանացնում է պարմաշրջանի
հայ ազգային-քաղաքական կյանքի ծանր վիճակը: Հայաստան աշխարհը
օտարի գաղութ էր, հայրենի հողի վրա, հայոց երկնիքի տակ հայը ոչ մի
իրավունք չուներ, զրկված էր ամեն ինչից: Ավերակվել էր երկիրը, բաժան-
բաժան դարձել նենգ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև: Օտար
բարձրերը, ծես ու կարգերն էին մտնում հայի տուն: Պարմական
Հայաստանի այս անելանելի վիճակը Պ.Սևակը տալիս է պատկեր –
համեմատությունների ամբողջության մեջ, թանձրացնում ժամանակաշրջանի
բովանդակությունը.

Հայաստան կոչված աշխարհն էլ արդեն

Լուկ անունով էր Հայաստան կոչվում:

Ջոհված արջառի տաքուկ սրտի պես

Մեր հողն էր կիսված

Ո՛ր բռնի քաշված

Երկու շիկապած ու սուր շամփուրի,

Որոնցից մեկը պարսիկն էր բռնել կրակի վրա,

Մյուսը բռնել էր մոմերի վրա նենգ բյուզանդացին:

(Հ. 4, էջ 248)

Պ.Սևակի կերպավորումով: Մաշտոցը հանկարծահաս Գյուլարար
էր, այլ իմաստուն-մարգարե Գյուլարար: Նա էր, որ քառասյին այդ
պարմաշրջանում ամենքից շուտ և ամենքից խորը հասկացավ, որ եթե
զորքով ու զենքով չենք կարող փրկվել, պետք է մարտադաշտ հանել
լեզուն. «Ինչ էի կարող ոչ մի զորք անել՝ լեզուն է անում»:

Մաշտոցը լեզուն դարձրեց զենք՝ գիտակցելով, որ

Քաջերի սահմանն իրենց զենքն է հենց:

Քաջեր միշտ էլ կան,

Ձենք է հարկավոր:

(Հ. 4, էջ 250)

Բանաստեղծը մի շարք անհերքելի փաստերով համոզում է, որ Մաշտոցի որոշումը միակն էր: Արդեն չկար «պետ ու պետություն», փլվել էր հայոց թագավորությունը, ժողովրդի առջև մի անհայտ անդունդ էր: Հայոց դպրության ստեղծումով, որն ազգային լեզվի պահպանման հրեղեն զենքն էր, Մաշտոցը ծնունդ տվեց 36 զինվորների ու «նորարարի մի մաքառումի», և հայությունն այլևս պարտություն չպիտի ունենար: Եվ բանաստեղծի մեկնությամբ Մաշտոցի նման այրերի ծնունդը մեծ խորհուրդ ունի և աստվածային հայտնություն է.

Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,

Որպեսզի դառնան նոր զորեղություն:

Նրանք ծնվում են ինչ-որ հանձարեղ մի հոգնությունից,

Որպեսզի դառնան հանձարեղություն:

(Հ. 4, էջ 256)

Պ.Սևակը Մաշտոցի և նրա գյուղի բանաստեղծականացմամբ, նաև «Հայոց լեզու», «Խոսք հավաստիքի», «Մայրենի լեզու» բանաստեղծություններով գեղարվեստորեն պատասխան տվեց այն խնդիրներին, որոնք 20-րդ դարասկզբին քննում էին մեր մեծերը՝ Թումանյանը, Տերյանը, Չարենյը. «Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ու՞ր ենք գնում»: Հայ ժողովրդի գոյարևումի, ազգապահպանման հարցերն էին դրանք, որոնք հենց սկզբից Պարույր Սևակի պոետական խոհերի կենտրոնում էին ու ի վերջո փարան դեպի «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» գեղեցիկ պոեմը:

Մաշտոցի հայտնությունը, ըստ բանաստեղծի, նշանակում էր («Բախտի հակառակ, թե՛ վայրկենական նրա զոջումով») երեկվա մեզնից խլվածի վերադարձ, կործանված մեր հավաքի վերագոյնում, կրթության ու քերթության թռիչք, մեր ինքնության կոփում: Նրանով մնացինք կանգուն, շար ընկանք, բայց վերածնվեցինք, մեզ չեն հիշում, այլ մենք ենք հիշում, մեզ չեն վկայում, մենք ենք վկայում» (հ. 4, էջ 263):